53. ԾՈ̈ՒԿՆԸ ՓԸՌՆՈՂԻՆ ՏԸՂԱՆ

Ինըմ ա, չինըմ մին ծո̈ւկըն փըռնող ա ինըմ։ Էտ ծուկըն փըռնողին ինըմ ա մին կընեգյ, մին տըղա։ Ըտրանք ախկատ ին ապրըմ։ Հա̈րը տըղին նըհետ ամմեն օր ծո̈ւկըն ըն փըռնըմ, մին թա̈հրա̈վ ապրըմ։

Մին օր հա̈րը հիվընդանըմ ա։ Տըղան մինա̈կ ա քյինըմ ծո̈ւկնը փըռնըմ։ Դըրրո̈ւգյո̈ւնը թոռը քըցըմ ա կյետը մին վըեսկե ծո̈ւկըն ա տո̈ւս կյամ։

Էտ ծո̈ւկնը լո̈ւզո̈ւ յա առնըմ, խոսըմ, ասըմ ա. — Ա՛յ տըղա, ջա̈հիլ տըղա, ինձ էլհա ճո̈ւրը քըցի, քյըեղ մին լա̈վոթուն կանիմ ինձ աղագի, ինձ պեց թող, քյինիմ։

Էտ տըղան ո̈ւրա̈ն մըթկըմը ասըմ ա. «Ըստրանա ինձ հի՞նչ լա̈վոթուն անող կինի՛, վեր անի, լհա̈ պեց թողիմ քյինի, կո̈ղի ո̈ւրո̈ւգյո̈ւնըս սոված մընանք»։

Իտի էլ անըմ ա։ Տեռտակ ետ ա տըեռնըմ։

Հա̈րը յրան կըղնըվըմ ա, ասըմ. — Ա՛ շան տըղա, պա մարթ ծո̈ւկնը կը փըռնի, մին էլ պեց թողի՞, էտ ըշտըղի ասած ա, աթառան-անաղան իտի պեն չիլա̈լ, թա̈զա̈ ճըտեր ըն տո̈ւս եկալ, արկաթի ծո̈ւվանք ըն ածըմ, վեչ մուհա՛լ, ախեր հի՞նչ մուհալ անիմ, կըլո̈խըս կըկյա։

Էտ տըղան հորը անգուճ չօնըմ։ Ամմեն օր ո̈ւրա̈ն հացին փայը պերըմ ա, քըցըմ ծովը, ծո̈ւկնը կյամ ա, յոր օնըմ, օտըմ։

Մին օր էլ հա̈րը ղույմիշ ա ինըմ, ո̈ւշո̈ւնց տալավ ընդըրան տա-

նան տունս ա քրցրմ, ասրմ. — Ա՛ էշի քոռա՛կ, բա յրես ամմեն օր չրբչարվիմ, շափա քաշիմ, քրրթնունք թափիմ, հաց ըշխադիմ, տու տանիս ծունկնին տա՞ս, դե կրլոխտ ղրրփիլ մի, տունս եք տանան ռադ իլ, էլ աշկրս քյրեզ տեսնա վեչ, ըշտեզ օզրմ ըս, քյինի, էս էլ իմ բախտրս, լհա՜ ասրմ ըն «տրղա ինի, տրղա ինի», էս էլ քյրեզ տրղա, տեսնամ դարդիս հի՞նչ դարմանն ա։ Ախճիգյը հազարապատիկ ըստբանա լավ ա։

Էտ տրղան լաց ինելավ եր ա կրենրմ, կրլոխ յոր օնրմ, քյինրմ։

Քյինրմ ա, քյինրմ, ընգնրմ ա օտար երգյիրնի, ճրնապարին մին պառավ մարթ ա շրհում, ասրմ. — Ա՛ բալա, էտ ըշտե՞ղ ըս քյինրմ, իտի միննը-մինակ։

— Ա՛պեր, քյինրմ ըմ աշխադանքի, վեր մին թարհրավ կրլոխրս պահիմ։

Էտ պառավ մարթրն ասրմ ա. — Ա՛ ղարիբ բալա, յրես էլ ըմ աշխադանքի քյինրմ, եք մինտեղ քյինինքյ աշխադինք, մին տեղ էլ ապրինք։ Հինչ էլ աշխադինք, հալալ մեչան կես անինք։

Էտ տրղան ռազի յա կրենրմ։

Քյինրմ ըն, քյինրմ, շատ ըն քյինրմ, թա խրեգյ ըն քյինրմ, շատ նան խրեգյը ուրանք ըն գյուդում, վերչը հրսնրմ ըն մին մրեծ, հարուստ քաղաքի։

Քյինրմ ըն ըտրղին թաքավերին մեծին կոշտը, ղաչանք անրմ, վեր ուրանց աշխադանքի յոր օնի։

Էտ մրեծը ըտրանց գյադա յա յոր օնրմ։

Էտ թաքավերին մին մարալ-ջեյրան ախճիգյ ա ինրմ։ Մին դոնրմ էտ ըխճրկանը լուզուն լալկվրմ ա։

Թաքավերը հիշքան դոխտուրնի յա կանչրմ, պեն չի տունս կյամ, վեչ մինը կարրմ չրն լրվրցնին։

Մին օր էտ պառավ մարթը, մին ճրպատ ծեռքին, քյինրմ ա թաքավերին կոշտը, ասրմ. — Թաքավերը ապրած կրենա, եկալ ըմ ախճիգյրտ լիվրցնիմ։

Թաքավերը կրզնրվրմ ա, ասրմ. — Ա՛ պառավ, պրլը-մել խոսիլ մի, պրլը-կատար չրս, էտ ա մեծ մարթ ըս, պրլրհուշտրի չրս, պադեվրտ պահի՞, տու լալեգյ լիվրցնող չը՞ս, քյինի պենիտ։

Ամմա էտ մարթը ծեռք չի քաշրմ, ասրմ ա. — Չէ՛ վեր չէ՛, յրես կրլիվրցնիմ։

Թաքավերրն ասրմ ա.— Դե վեր իտի յա, իմ ախճիգյրս լափ առռի տեն ընգածը իրեք հետ խուսուցրրու, թա կարիս խուսուցրնիս,

համ ախճիգյոս քյրեզ կտամ, համ էլ թաքավերոթունիս կեսը կտամ քյրեզ։

Էտ պառավ մարթըն ասըմ ա. — Թաքավերըն ապրած կենա։ Առաչի դոնըմը քու ըխճրկանըտ լհա՜ էս ուրուգյունն կը խուսըցնիմ։ Ըխճրկանըտ տիր մին օթախի քյունչում, յա պուճախըմ, մին փոռդ՜ էլ քաշի, վեր իրեսը ըրվա վեչ, վեզիրներատ մինին էլ կանչի, վեր տեսնա, կյա քյրեզ ասի։

Թաքավերը իտի էլ անըմ ա։

Ուրուգյունը վեզիրը կյամ ա, էտ պառավ մարթին նըհետ քյինըմըն էն օթախը ըշտեղ էտ ախճիգյըն ա։

Ըսկսըմ ըն վեզիր նան էտ մարթը խիլլա՜ զուրուց անիլը։

Վերչը էտ պառավ մարթը ասըմ ա. — Վեզիր, ախեր մունք շատ զրուց ըրինք, մըհեգյ էլ թող էս ճրպատը զուրուց անի։

Ասըմ ա, պըրծընըմ, ճրպատը թող անըմ, քըցըմ օթախին մեչտեղը։

Ճրպատը ասըմ ա. — Թաքավերի ախճիգյ, լա՜վ լըսի հա՜, վերչըմը բեդմա շողար տաս։

Վեզիրը շըշկըլված մընացալ ար տեղը մեխված։

Ճրպատը ասըմ ա.— Իլա՜լ ա, չիլա՜լ մին մարթ։ Էտ մարթին իրեք տըղա յա իլա՜լ։ Մին օր էտ մարթին ախպորը մադար ախճիգյը ծանդրը հիվանդանըմ ա։ Քըշերավը էտ մարթին մեծ տըղան քյինըմ ա ուրա՜ն ղորփուրը ըխճրկանը զիրավ ընցնի։

Մին խիլլա՜ կընալանը ետը ղորփերըն ասըմ ա. «Թա՜ կարիս մին հենց ուատոթուն սըվերիս, մին փեշա՜կ սըվերիս, վեր օրը հա՜ուր մանեթ փող աշխադիս, ախճիգյըս վեր լիվանա, քյրեզ կըտամ»։ Տըղան ըեքյեփ քյինըմ ա ուրա՜նց տոն։ Քյըսօրին միշնա՜կ տըղան ա կյամ ուրա՜ն ղորփուրը ըխճրկանը զիրավ ընցնի։ Մին պատառ խոսելանը ետը, ղորփերը էլհա իտի յա ասըմ։

Իրեք ախպերքըն էլ ուրուր պեն չըն ասըմ, ուրա՜նց դա՜ռդը-ղեյիղը թաքուն ըն պահըմ։ Վերչը մին օր ուրուր ասըմ ըն ուրա՜նց սըրտինը։ Էքյսը իրեք ախպերքըն էլ ուրա՜նց հորը մընանք պարով ըն ասըմ, ճընապար ընգնըմ, քյինին ամեգյը մին փեշա՜կ սըվերին։ Մեծ ախպերը տըեռնըմ ա իմաստուն, միշնա՜կ ախպերը՝ լա՜վ վազ տրվող, պուճուր ախպերը՝ հա՜քյիմ։ Տրանց անա ամմեն մինը օրը հա՜ուր մանեթ ա ախշադրմ։ Մին օր մեծ ախպերը ասըմ ա. — Մեր ղորփորը ախճիգյը էն ա մըռնելի յրա, հարկավեր ա շուտ նի հըսնիլ։

Պուճուր ախպերը ասըմ ա. — Ցրես ինդի մին ճար օնիմ, վեր խըմի, դա՜ստի լիվընալու յա, թա վեր շուտ հըսցնող ինի։

Միջնա̈կ ախպերըն ասըմ ա. — Ցըխս շո̈ւտ, վազ տալավ կը-հըսցնիմ։ Ասըմ ա, պըըծընըմ, ճարը յոր օնըմ, վազ տամ, մին մունու-տըմը հըսցընըմ։ Հիվանդը ճարը խըմըմ ա, լիվանըմ։ Վերշը էտ իրեք ախպերը կյամ ըն յրա հըսնըմ։ Էտ ախճիգյը մըհեկ էտ իրեք ախպոր-ցան հո՞ւր ըեդմա տան։ Մըհեկ թաքավերի ախճիգյ, տինինք թա տու վըս սուդյան, ախճիգյը հո՞ւր կըտաս։

Փա̈ռդին քըմական թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Պուճուր ախպորը։

Վեզիրը համ շատ ուրխանըմ ա, վեր թաքավերին ախճիգյը խոսից, համ էլ առռի քար կըտըըմ։

Ճըպատըն ասըմ ա. — Խե՞ պուճուր ախպորը։

Թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Շատ պա̈րզ։ Մեծ ախպորը իմաստոթունը ընդրա ծեռքան ինք օնող չի ինելու, կյալու չըն կըլո̈խը պուք տան, խելքը մեչան հանին։ Միջնա̈կ ախպերը լա̈վ վազ տըվող ա, էտ վազ տալը կյալու չըն ինքյ օնին ծեռքան։ Պու-ճուր ախպորը հընարած, քյիթա̈ծը լհա̈ էն ճարըն ա, վեր էն ախճիգյը խըմալ ա, լիվացալ, սըղացալ։ Էտ ճարը խըլալ ըն ընդրա ծեռքան, թողալ տեռտակ։

Ճըպատը ասից. — Շատ դո̈ւզ ըս ասըմ, թաքավերի ախճի՛կ։

Վեզիրը վազ ա տամ թաքավերին կոշտը լոխ նաղլ անըմ։ Թա-քավերը ընգուջներին հըվատամ չի, ամմա դե վեր վեզիրը ասըմ ա, շատ ա ուրխանըմ։ Էն մին օրը էտ պառավ մարթը թաքուհուն նըհետ ա քյինում էտ ըխճըկանը օթախը։

Ըտրանք մին խիլլա զո̈ւրո̈ւց ընելանը ետը, էտ պառավ մարթը ճըպատը թող ա անըմ, քըցըմ, օթախին մեշտեղը, ասըմ. — Մունք շատ խոսեցինք, մըհեկ էլ թող ճըպատը խոսի։ Թաքավերին կընեգյը մընըմ ա մաթ մընացած։

Ճըպատըն ասըմ ա. — Թաքավերի ախճիգյ, լա̈վ լըսի, պա-դասխան ըս տալու։ Ինըմ ա, չինըմ մին մարթ ա ինըմ։ Էտ մարթին ինըմ ա իրեք տըղա։ Տա ո̈ւրա̈ն տըղորցը ղըրկըմ ա կարթելի։ Իրեք ախպերքըն էլ լա̈վ ըն կարթըմ, էն պեցո̈ւր շկոլըն էլ ըն ավարտըմ։ Էտ իրեքին լա̈վ կըրթելի հետի բաղարկեքյ ըն տամ։ Մեծին տամ ըն մին հիլի, միջնա̈կին՝ մին մոտացիկըլ, պուճուրին՝ մին կյա̈րմո̈ւր խընձո̈ր։ Ըտրանք ետ ըն տըեռնըմ, թա կյան տոն։

Ճընապարին մեծ ախպերը եշըմ ա հիլուն, ասըմ. — Գյուղում ը՞ք հի՛նչ կա, մըզանա շատ հեռու կա մին կյեղեցիկ ախճիգյ։ Նա շատ ծանդըր հիվանդ ա, շատ ապըի շատ, հենգյ մունուտ։

Պուճուր ախպերը ասում ա.— Թա էս խընձորան օտի, դաստի կըլիվանա։

Միշնակ ախպերը ասում ա. — Յըես էտ խընձորը դաստի ընդրան կը հըսցնիմ։

Նա մուտացիկըլ ա նըստում, հենգյ մունուտումը խընձորը հըսցընում էն ըխճրկանը։ Ախճիգյը խընձորը օտում ա, դաստի լիվանում։ Մըհեկ ախճիգյը պիտի փըսակվի ըտրանց անա մինին նըհետ։ Վեր ուրուր քյեսիի նի չի կյան, կործը սուդի յըն տամ։ Թաքավերի ախճիգյ, տինինք թա սուդյան տու վրս, ախճիգյը հո՞ւր կըտաս։

Թաքավերին ախճիգյը ասում ա. — Ախճիգյը կտամ պուճուր տըղին։

Մարը՝ թաքուհին վեր լըսում ա ախճիգյը խոսում ա, ուրխոթունան տեղան եր ա թըռչում, ծըվծըվում։

Ճըպատը ասում ա. — Խե՞ բեդմա պուճուր տըղին տա՞ս։

Թաքավերին ախճիգյըն ասում ա. — Շատ պարզ։ Ընդրանք իրեքըն էլ լավ կարթալ ըն, բադարկեքյ ստացալ, էրկուսին բադարկան էն ա ուրանց ծեռքին, էն պուճուրին բադարկան էն ախճիգյը կերալ ա, մրհեկ պուճուրին ծեռքին բադարկա չի կա, ավաղը էն ախճիգյը բեդմա պուճուր ախպորը տան։

Ճըպատըն ասում ա. — Թաքավերին ախճիգյը ապրած կենա, լոխ դուզ ա։

Թաքուհին վազ ա տամ թաքավերին կոշտը, լոխ ասում։ Իրեքինչի օրը ուրուգյունը էտ պառավ մարթը քյինըմ ա էտ թաքավերին նըհետ, վեր ընդրա քըշտին ըխճրկանը խուսըցնի։ Էրկուսավ՝ թաքավերը նան էտ պառավ մարթը խիլլա զըրուց ըն անում։

Ըտրանա ետը էտ պառավ մարթը ճըպատը թող ա անում, քըցում օթախին մաչ տեղը։

Ճըպատըն ասում ա. — Թաքավերի ախճիգյ, լավ լըսի, վեր վերչըմը իմ հարցիս դուզ շողար տաս, վեր յըես էլ քյըզանա շունրակալ ինիմ։ Ինըմ ա, չինըմ մին դուլգյար, մին դարզի, մին իմաստուն։ Ըտրանք հընգյերանըմ ըն, քյինըմ մոտիկ քաղաքը։ Ճընապարին մըթնըմ ա։ Ըտահանք քըշերը մընըմ ըն մին ծըմակըմ։ Խոսկը մին ըն անում, վեր հերթավ քըշերը ղարավուլ քաշին։ Առաչ ղարավուլ ա քաշըմ դուլգյարը։ Իմաստունը նան դառզին քոն ըն ինըմ։ Դուլգյարը վեր մըրսի վեչ, մին ծառ ա կըտրըմ, ըտրանա ըսկըսըմ մին կյեղեցիկ ախճիգյ շինըմ։ Կողի շատ ա չըրչարվում, ամմա շատ դաշանգյ ա տուս կյամ էտ ախճիգյը։ Մըհեկ էլ նորաթը կյամ ա դառզուն, վեր ղարավուլ քաշի։ Դառզին հալա գյուդում ա, թա ուրան

անա մին տասը շագ հեռու մին ղուրուլթու կա, տա կյող ա։ Յավաշ-յավաշ մուտանըմ ա, տըեսնըմ փեդից շինած ախճիգյ ա, կլխի յա ընգնըմ, վեր էտ էն դո̈նլգյա̈րին պեներըն ա։ Էտ դա̈ռզին էլ ըտրա հետի շո̈րեր ա կարըմ, վեր վախտը անց կըենա, մինչև իմաստունին նորաթը կյալը։ Ըտրանա ետը իմաստունն ա ղարավուլ քաշըմ։ Իմաստունին աշկավըն ա ընգնըմ էտ կյերպարանքը, յավաշ-յավաշ մուտանըմ ա, եշըմ, կըլո̈խ ընգնըմ, թա պենը հինչումըն ա, ինքըն էլ ո̈ւրա̈ն իմաստութունըն ա պինըցնըմ, էտ անսունչ փեդի ըխճըկանը, ո̈ւրա̈ն սունչան սունչ ա տամ։ Քըշերավը դո̈նլգյա̈րը, դա̈ռզին եր ըն կըենըմ, տեսնըմ մին լա̈վ ախճիգյ ըտեղ կաղնած։ Ըտրանց անա ամմեն մինը օղըմ ա էտ ըխճըկանը նհետ փըսակվի։ Ըտրանք ո̈ւրո̈ւր նըհետ հո̈շա̈թ ըն տամ։ Ըտրա հետի էլ, կործը տամ ըն սուդին։—Թաքավերի ախճիգյ, տինինք, թա սուդյան տու վըս, հո՞ւր կըտաս էտ ախճիգյը։

Թաքավերին ախճիգյը ասըմ ա. — Յըես ախճիգյը կտամ իմաստունին։

Թաքավերը, վեր լըսըմ ա ըխճըկանը խոսիլը, օղըմ ա, թա օշը տանի։

Ծըպատըն ասըմ ա.—Խե՞, խե՞ կըտաս էն ախճիգյը իմաստունին։

— Ընդըրա հետե, վեր դո̈նլգյա̈րը կարող ա իտի շատ փեդի ըխճըկերք շինի, դա̈ռզին էլ կարող ա ինդի շատ շո̈րեր կարի, ամմա իմաստունը կարող չի էլհա մինին հոքի տա, քանի վեր առանց էն էլ ո̈ւրա̈ն հոքվեն կեսը տըվալ ա։ Վեր ընդըրա կորած հոքվին կեսը տեղը կյա, ըտրա հետի ախճիգյը պիտի իմաստունին տանի։

Ծըպատըն ասըմ ա. — Լոխ դո̈ւզ ըսեցիր, Թաքավերի ախճիգյ։

Թաքավերը էտ լոխ վեր լըսըմ ա, շատ ա ուրխանըմ, էտ պառավ մարթին ասըմ ա. — Դե վեր տու իմ ախչիգյըս խուսըցրալ ըս, իմ խոսկըս էլ խոսկ ա, ախճիգյըս էլ ա քունը, թաքավերոթունիս կեսըն էլ։

Էտ պառավ մարթըն ասըմ ա. — Թաքավերը ապրած կըենա, մըեզ ճընապար տիր դիրի մեր հայրենիքը։ Հըրսանիքյը ընդեղ ընք անելու։

Թաքավերը ռազի յա կըենըմ։ Օխտը օղտ ա վըեսկավ պեռնըմ, էտ պառավ մարթին, ո̈ւրա̈ն ըխճըկանը, մին էլ էն շա̈հիլ տըղին ճընապար տինըմ։

Ըտրանք հըսնըմ ըն ընդեղ, ըշտեղ ո̈ւրո̈ւր պըտահալ ըն։ Էտ պառավ մարթը օրախ-օրախ էտ տըղին ասըմ ա.—Հեսէ՞ ըստեղ մունք ո̈ւրո̈ւր պըտըհեցինք, ըստեղ էլ ո̈ւրո̈ւր անա կըպըժա̈նվինք՝

ճտ չա̈հիլ ախճիգյը ինձ հարկավեր չի, քյըեզ ըմ տամ, ըտրա նըհետ էլ էս օխտը օղտի պեռնը վըեսկեն։ Ցըես էն ծո̈ւկնրն ըմ, վեր տու ազագեցիր, հա̈լա̈ հաց էլ տըվիր։

Ասըմ ա պըռծընըմ, ծո̈ւկնը տըեռնըմ, ընգնըմ մոտի կյետը։ Ախչիգյը նան տըղան ո̈ւրո̈ւր խըտտըմ ըն, պըշպըշորըմ, ո̈ւրա̈նց ճընապան ընգնըմ, կյամ հըսնըմ ո̈ւրա̈նց երգյիրը, կյամ ո̈ւրա̈նց տոն։ Կյամ ըն տոն, տըեսնըմ ո̈ւրա̈նց հա̈րը նան մարը հիվանդ, հոգյի տալիս։ Վեր ո̈ւրա̈նց տղին տըեսնըմ ըն, Թեքյ ընգած տեղան լոք ըն տամ, եր կըենըմ, լիվա̈նըմ։ Ուրա̈նց տըղին հետի մին լա̈վ հըրսանիք ըն անըմ, լոխ մին տոն տըեռած օրախ ապըրըմ։ Ըտրանք հասին ո̈ւրա̈նց մուրազին, մունք էլ հասնինք մեր մուրազին։